

ԹԻՎ 14 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 32-Ա
«25» նոյեմբերի 2021թ.
ք.Էջմիածին**

**ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ԴՎԻԹ
ՄԻՆԱՍՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԻՆՔՆԱՔԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ
ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

Արմավիր մարզի Փարաքար համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող «Դավիթ Մինասյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Արտավազ Անդրանիկի Հովսեփյանը 2021 թվականի նոյեմբերի 25-ին թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում՝ առանց նոտարական վավերացման:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 137-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Թեկնածուն քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո իրավունք ունի հանելու իր թեկնածությունը: Կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված քաղաքացու անունը, ազգանունը ցուցակից հանվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Թեկնածուի ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է ընտրական հանձնաժողովի նիստում: Նոտարական կարգով վավերացված՝ ինքնաբացարկի մասին դիմումը սույն հոդվածի իմաստով համարվում է վավեր, եթե այն ընտրական հանձնաժողով է ներկայացվում վավերացվելուց հետո՝ առավելագույնը եռօրյա ժամկետում:»:

Թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովի 25.11.2021թ. նիստին Արտավազ Անդրանիկի Հովսեփյանը պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել:

Վերոգրյալը հիմք ընդունելով և հիմք ընդունելով Ընտրական օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ մասը՝ թիվ 14 տարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Արմավիր մարզի Փարաքար համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող «Դավիթ Մինասյան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Արտավազ Անդրանիկի Հովսեփյանի ինքնաբացարկի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

***Թիվ 14 փարաձքային
ընտրական հանձնաժողովի նախագահ՝
Կ.Տ***

Գ.Նազարյան